ԳԼՈՒԽ

5

ԳԾԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

§1 ԵՐԿՈՒ ԱՆՀԱՅՏՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Վերլուծում, համադրում

1. Կազմեք հավասարում կամ հավասարումների համակարգ՝ ըստ խնդրի պայմանների.

   Երկու բանվոր կատարում են միևնույն աշխատանքը: Քանի՞ օրում կկատարի նրանցից յուրաքանչյուրը այդ աշխատանքը առանձին, եթե հայտնի է, որ.

   ա. երկուսով միասին կատարում են 12 օրում,

   բ. երկուսով միասին կատարում են 12 օրում: Իսկ երբ սկզբում 15 օր աշխատեց միայն առաջին բանվորը, որից հետո՝ 5 օր միայն երկրորդ բանվորը, նրանք կատարեցին աշխատանքի 75%-ը: